

ՊԱՐԺՈՒՄԻ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պաշտարան	համար
Տարեկան	12 Գր.
Վեցամսեայ	6 »
Արժանատիականի	
համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Ամերիկայի	համար
Տարեկան	3 Գր.
Վեցամսեայ	1.50 »

Մանուցիական տպարանում  
 Բնակարան համար 40 ս.  
 Իսկ վերջին երեսի համար  
 20 սանթրիմ է. երես  
 ֆեկ անցի անգլալեռու  
 համար 20 0/0 զեղյ կըլ  
 հայ:

Վառանգյի համար ձեռք 40 սանթրիմ

# ՇԱԲԱԹ

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԵՏՄԱՐՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նախկին երկրորդ կողմի  
 հիմնադրութեան հաս-  
 ցիին

Редакция на вѣстникъ  
 „Шаржумъ“  
 Варна

Redaction du journal  
 „Charjoum“  
 Varna (Bulgarie)

Արժանատիականի համար  
 ձեռք  
 )( 20 ՍԱՆԹՐԻՄ )(  
 Պաշտարանի համար  
 ձեռք  
 )( 15 ՍԱՆԹՐԻՄ )(

Գրութիւնք եւ չէն տպուի

ՇԱԲԱԹՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԳՆՆԻՈՒԿ ՎՃԱՐԻ

### ՊԱՆԴՈՒՄԻ ՎԵՏՏԸ

Հայի դաշտեր, տխուր դաշտեր  
 ձեզանից  
 Եւ ծնունդ եւ է՞ր բաժանուիմ, հե-  
 առանամ,  
 Սիրող որդին լոկ մօր գրկում յու-  
 սալից՝  
 Պիտի ապրէր ծաղկի նրման ան-  
 թառամ:

Բայց ո՞վ մահու, թշուառութեան  
 լայն դաշտեր,  
 Փուշ է պատել ձեր արտերին բար-  
 գաւած,  
 Այժմ մընում էք ամայի և ան-  
 տէր,  
 Դո՛ւք, հայ քաջաց նախկին օրրան  
 աննրւած:

Դուք է՛լ չունէք յոյսով փրուած  
 ծաղիկներ,  
 Ձեզ մօտ փոխան սիրոյ երգին սո-  
 խակին՝  
 Լսուում է գոյժն ազոռաներուն գի-  
 շակեր՝  
 Թէ մորթուել են բիրաւար տղայ,  
 կին:

Մերկ և քաղցած հայ գիւղացին չէ  
 կարող  
 Է՛լ քրտինքով ոտոգել ձեզ լի-  
 առատ,  
 Է՛լ չունէք դուք գառնուկները  
 համբուրող  
 Մատաղ կոյսեր՝ շուշանի պէս ա-  
 նարատ:

Կարկաչահոս վտակները ձեր բո-  
 լոր  
 Մունջ, անչըչուկ խուռափում են  
 յուսահատ,  
 Է՛լ կորցրած իրանց ուղին՝ ծրու,  
 մուրթ  
 Թափառում են անապատից անա-  
 պատ:

Մազերի մերկ կրմախքները ձե-  
 աւարած՝  
 Արդարութիւն են աղերսում շա-  
 րունակ,  
 Բայց վրճոն են անգութ երկինք  
 էլ անդարձ  
 Թափել նրբանց գրկին լոկ շանթ,  
 լոկ կայծակ:

Եւ ես — ձեր հէգ նժուկ որդին —  
 գուր, ի գուր  
 Որոնում եմ ձեզ մօտ անկիւն մի  
 խաղաղ,  
 Ո՛ր բուսնէին կոկոն վարդեր թարմ  
 և ուր

Հանգչի եւ գոնէ բույս մի, ա-  
 լա՞ղ:

Ե. ես — ձեր հէգ պանդուխտ որ-  
 դին — վշտաբեկ  
 Ստիպում եմ էլի թողնել ձեզ տըր-  
 տում,  
 Բայց պաշտելի յիշատակը ձեր եր-  
 քէ՛ք  
 Պիտ՝ չը թողի, պիտ՝ չը մտնի իմ  
 սըրտում:

Այ դուք դաշտեր, տխուր դաշ-  
 տեր ձեզանից  
 Եւ ծնունդ եւ է՞ր անջատուիմ,  
 հեռանամ,  
 Սիրող որդին լոկ մօր գրկում յու-  
 սալից  
 Պիտի ապրէ՛ր ծաղկի նրման ան-  
 թառամ:

Վեհա

### ՍԱՍՈՒՆԻ ԶԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Առանց յեղափոխականի լուրջ  
 առիթներ պատճառելուն, այս տա-  
 րի, դեռ ձմրան մէջ Սուլթանը  
 գաղտնի հրամաններով պատի-  
 րեց իր Հայաստանում գտնվող  
 գլխաւոր զօրաբանակի հրամանա-  
 տարին միջոցներ ձեռք առնել  
 դարնանը դէպի Սասուն արշաւե-  
 լու: Այդ գաղտնի հրամանների  
 հիման վրա զօրքերը լցվեցին  
 Մուշ գաւառը և տեղի ունեցան  
 Յունան գիւղի դէպքերը:

Հայ յեղափոխական Դաշնակ-  
 ցութիւնը ժամանակին հասկանա-  
 լով Սուլթանի միտքը, մեր  
 Պարիզում գտնվող բարեկամ ֆրան-  
 սացիների միջոցով խոյն դիմեց  
 ֆրանսական կառավարութեան,  
 որը իր հիւպատոսների միջոցով  
 Դաշնակցութեան ուսած տեղեկու-  
 թիւնները ստուգելուց և իրաւացի  
 գտնելուց յետոյ, անմիջապէս դի-  
 մեց Սուլթանին որ հրամայէ  
 Սասունի դէմ լինելիք արշաւան-  
 քը շիրազործել:

Ահա այդ գիմումների վրա  
 թուրք զօրքերը միայն շրջապա-  
 տեցին Սասունը և Սուլթանը Օր-  
 մանեանին հրամայեց միջնորդի  
 դեր կատարել իրեն և Անգրանի-  
 կի ու Սասունում ապաստանած  
 նրա ընկերների միջև, վերջին-

ներին խոստանալով ազատ թող-  
 նել երկրից դուրս գալ, եթէ հա-  
 մաձայնին անձնատուր լինել:

Անգրանիկը չը համաձայնվեց  
 ու շարունակում է յամառել: Մի  
 երկու անգամ ինքը և իր խմբերը  
 քնդհարում ունեցան թուրք զօր-  
 քերի հետ և այժմ դեռ այնպի-  
 սի որոշ նորութիւններ չկան, որ  
 կարենանք ճիշտ գաղափար կազ-  
 մել Սասունի կացութեան մասին:

Այս մեր պատմածից պարզ ե-  
 րեւում է որ Սասունում և իր շր-  
 ջակներում գտնվող յեղափոխա-  
 կանները նախադրական չեն եղել,  
 այլ միայն նախազուգակելով որ  
 թուրքերը իրենց անցեալ տար-  
 վան չը յաջողված ծրագրերը — Սա-  
 սունցիներին լեռներից իջեցնել,  
 Ռասունում զօրանոց շինել — վըճ-  
 ուել են այս տարի իրագործել,  
 որոշել են մաքառել ժողովրդին  
 թե ու թիկունք հանդիսանալով  
 իրեն դիմադրութեան մէջ:

Ահա այս արդարացի և վճռո-  
 ղական քայլը, որը և միակ  
 միջոցն է այդպիսի պարա-  
 գաններում, քննադատութեան  
 նիւթ է դարձել մեր սպտոտ և  
 ստրկական տրամադրութիւննե-  
 րով չի մի քանի թերթերի մէջ:

Ի հարկէ քննադատում են ան  
 լի գաշնակցականներին և ինչ՞ու-  
 որովհետեւ նրանք այդ կողմե-  
 րում գործում են և տրամադրի-  
 չեն ստրկաբար վիզները ճկել և  
 թուրքին թող տալ որ ազատ հա-  
 մարձակ իր գաւաղրական ծրա-  
 գիրները իրագործէ Սասունի մէջ:

Վայն ու վոյը, մանաւանդ վե-  
 րակազմեալ կոչվածների կողմից  
 աշխարհ է բռնել. նրանք արգէն  
 գուժում են սարսափելի աղէտներ,  
 հիմիկվանից անթէմա են կար-  
 դում Դաշնակցութեան գլխին.  
 Ժողովրդին ուզում են ցոյց տալ  
 որ Դաշնակցութիւնը, դիտմամբ,  
 հայ ժողովրդին խաբելու համար,  
 Սասուն շարժումներ է ստեղծում:

Ու իրենց ստորութեան մէջ այն  
 քան են առաջ գնում որ մեծ տեն  
 չանքով փափաքում են Սասունը  
 ջարդված տեսնել, որպէս զի կա-  
 րենան ասել — ա՛յ, եթէ կաշնակ-

ցականները այդ կողմերում չը  
 գործէին, Սասունը չէր ջարդվի:  
 Ճիշդ Սուլթանի ծառաների  
 հոգեբանութիւն և տրամադրու-  
 թիւն է այս: Բայց դեռ ապա-  
 գան ցոյց կը տայ թէ Սուլթանի  
 հարազատ զաւակների այդ բաղ-  
 ձանքները ինչ չափով կը կատար-  
 վեն:

Մենք յոյս ունենք որ ոչ Սուլ-  
 թանի և ոչ էլ նրա հարազատ  
 ծագուկ վերակազմեալ վարիչնե-  
 րի հայ ժողովրդի վերաբերմամբ  
 ունեցած չար բաղձանքները կի-  
 րագործվեն:

Ուրեմն Սասունը, եթէ թուրք  
 կառավարութիւնը իր բռնած  
 վերջին ընթացքը շարունակէ,  
 պարտաւորված պէտք է լինի ինք  
 նապաշտպանութեան դիմել  
 նոյնչափ եռանդուն կերպով, որ  
 չափ-բուռն կը լինեն թուրքերի  
 յարձակումները: Սասունի այդ-  
 պիսի դիրք բռնելու պարագա-  
 յին Հայ Յեզ. Դաշնակցութիւնն  
 էլ, որչափ որ այժմ իր ուժերը  
 կը ներեն, առանց կարեւորու-  
 թիւն տալու զանազան բուերի,  
 ադաւանների վայոցին և ստրկա-  
 հոգի հայ անուն կրող արարած-  
 ների բարբառնալանքներին պէտք  
 է իր աջակցութիւնը տայ Սասուն-  
 ցի քաջերին և նրանց մէջ գըտ-  
 նըվող մեր ընկերներին:

Սասունը կուր չէ յայտարարել  
 չեն յայտարարել և մեր այնտեղի  
 ընկերները և չէին կարող յայ-  
 տարարել, քանի որ Սասունցի-  
 ների համաձայնութիւնը չունեն.  
 բայց Սասունը որոշել է անձնա-  
 տուր չը լինել, պաշտպանվել. ու  
 մեր ընկերները պարտաւոր են  
 նրանց հետ այդ դժուարին գործը  
 կատարել: Դա է պահանջում հայ  
 ազգի, քաջ Սասունցու, հայ յե-  
 ղափոխութեան և Հ. Յ. Դաշնակ-  
 ցութեան պատիւը: Ի հարկէ  
 միակ Սասունի գիմադրու-  
 թիւնը չէ կարող Հայաստանը փր-  
 կել. այդպիսի պարզամիտներ,  
 մանաւանդ Դաշնակցութեան մէջ  
 գոյութիւն չունին. ու Դաշնակ-  
 ցութիւնը երբէք էլ արամագ-  
 րութիւն չունի հայ ժողովրդին

խորհրդով թէ՛ այդ շարժումներին անմիջապէս պէտք է հետևի հայերիս յաղթանակը...

Այս, թուրքերը Սասունցիները կամ կռու և կամ ստրկական հնազանդութիւն են պահանջում...

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Հ. Յ. Գ. Արեւել. Բիւրօն Մշոյ դաշտէն սասցած հետեւեալ նամակները...

Ն Ա Մ Ա Կ Ա.

Յունի. 14, 1904, ՍԱՍՈՒՆ

Միրելի եղբայրներ և քոյրեր! Կատարութիւնը յայտնի կերպով այժմէն պատրաստութիւն կը տեսնէ...

մեր դրացի Գեղարդոնց հայ գիւղը կողպտել, քանդել կուտայ քրդերուն և 7-8 մարդ սպաննելէն զատ գիւղի զխաւորն ալ բանտարկեց...

Փասուռ մեր դրացի լեւոնային աւանը ուր կը նստի ընդհանր գայմազամբ, առաջ ունէր 30-40 ոստիկան...

Ահա այսպէս կուզեն շղթայել մեզ և գարնան մէկ շունչով խեղդել...

Համբոյրներով Հ. Յ. Գ. Ա.Ր.Ե.Լ.Ե. ԲԻՒՐՈ

Ն Ա Մ Ա Կ Բ.

Փետր. 6, 1904, Մշոյ դաշտ

Միրելի եղբայրներ և քոյրեր! Սասունը ահա բռնկեցաւ և հրդեհը կը ճարակի...

Մեր զօրքերը մինչեւ Պուլկալիս հասնելուն շատ կը յողմէին, բայց մենք բոլոր սպաններս այն առաւելութիւնները ունէինք...

պատրաստութիւն, որոնց պիտի միանայ Բաղշէի զօրքն ալ, եւ այլն: Մեր բնկեր վ... անմիջապէս հարստեց այս լուրը...

Շատ ճշգրիտք, շատ պոռագիտք, մեր անհրաժեշտ կարիքներու մասին կրկնեցինք...

Անվերջ համբոյրներով Հ. Յ. Գ. Ա.Ր.Ե.Լ.Ե. ԲԻՒՐՈ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌՈՒՍ ԳՐԱԳԵՏԻ ՄԸ ԿՍՐՄԻԲԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ռուս նշանաւոր գրագէտ Նեմե. րովիչ Տանչենկօ, որ այժմս իբր պրուստիցի Սլովօֆին թղթակից...

Պէտք է Ռուս. Թրքական պատերազմը աւելի դիւրին էր, քան ներկայինս: Այն ժամանակ Մոսկովայէն մինչեւ Ճուրճէօ (Ռուս մանրա) չորս օրուան ճամբայ էր...

Մեր զօրքերը մինչեւ Պուլկալիս հասնելուն շատ կը յողմէին, բայց մենք բոլոր սպաններս այն առաւելութիւնները ունէինք...

Մեր ճամբուն մէջտեղը գրաւուած Ռուսներին մեզի համար ուղի ամանա մըն էր: Հոն կային քաղաքներ, մեծ ու փոքր, տաք բնակարաններ, առատ սնունդ...

Այս օր, մենք շատ զոհ կըլլանք, երբ մանչուրական խղճուկ խրճիթ մը կը գտնանք, որուն քով ամենապատիկ տունը իբր պալատ կարելի է ընդունել...

Պիրքութիւն մեզի ըսին՝ հետեւ նիդ վերցուցէք ողորմութիւնը...


1877 թուականին, մենք, ինչպէս Սուլիս կետարը, համոզված էինք թէ՛ բաւական էր որ անանք և պիտի յաղթենք:

Այսօր հանրութիւնը համոզված է թէ՛ պատերազմը դժուարին և երկարատեւ պիտի ըլլայ: Այլևս մեր ցնորքները մնացած չեն, և այժմս Ռուսիոյ շէջ շատ քիչ կան սրանք կը պնդեն իրենց հաւատքին վրայ, թէ գործ ունինք վայրենի և թոյլ թշնամու մը հետո:

Եւ, իրապէս, ինչպէս կըսէ Տանչենկօ, այսօր Ռուսական ամեն շրջանակներու մէջ համազուտ կայացած է որ ձաբոնիս վտանգաւոր թշնամին մը է, կասակ ընել չի սիրեր, և իր ամեն մէկ քայլը չափելով ու ձեւելով կառնէ եթէ ոչ բոլորովին յաղթելու, գոնէ սահմաններուն քով Ռուսիան թուլցնելու համար:

ՆԱՄԱԿՆԵՐՍ

ՐԱՐՆԿԱՄԻՍ



Ա.

Միրելի Արմէն,

Կուզես որ գրեմ քեզի, սխուր միայնութեանդ մէջ կը փափաքիս որ գոնէ իմ քեզ ուղղած նամակներու մէջ գտնաս այն մխիթարութիւնը որը քեզ կը պակսի եւ որուն զոն կարոտ ես, կարօտ, կը պատմեմ թէ շատ մեծ է ու տառապանքա հատոր: Կը հասկնամ, սիրելիս, այդ երկու բառերուն մէջ կը տեսնամ ներքին աշխարհիդ անհուն արկուծուծը: Այս զոն կը տեսնաս որ ամէն յանք ի գործ գնեմ հանգստացնելու, խաղաղեցնելու: Ընծուած, շարժուած ու քայքայուած էութիւնդ, Պիտի չի զլանում քեզի այնքանը որ կարողութեանս սահմանին մէջ կը տեսնամ:

Անշուշտ պիտի հարցնես թէ ինչո՞ւ այս անգամ հրապարակու է որ փափաքիք գրահայտմ տալ կը ջնանամ, այս իրաւունք պիտի ունենաս այդ հարցումը ուղղելու, ու որուն, քիչ վարը, երկու խօսք բուսական պիտի ըլլայ պատասխանելու:

Հետո՞ւ հայրենիքէ, հետո՞ւ սիրելիներէ, սպազաններէ ու բարեկամներէ, օտարութեան դասն ու մտք միմտորտին տակ ինկած, կերպիս կորուսած անցեալ երջանկութիւնդ, որը հետացած ու ո՞վ գիտէ՞ իսպառ ալ խոյս է տուած քեզի: Տխմար, ետանդ անհրաժեշտ օտարականներու միջոցաւ որ ժողովին մէջ ինկած միայնակ կղզաս ինքզինքդ, անուխիթար ու անօգնական, ու կարող կղզաս անհրաժեշտօրէն անոնց՝ որոնք կամ հարիւրաւոր մղոններու հետաքրքրութիւնը քեզմէ կը պատեն, և կամ բարբարոսին ահաւոր եղեռնին գոն՝ քեզ կըսպասեն վերին աշխարհիլ պատրաստութեանը մէջ, Եւ զոն զրկուած այս բոլորէն, զգուած այդ քու ներկայ ապուշ ու գոռահիկ կեանքիք

ապրտուկ միտքինակութենէն, միայն մէկ բաժնի է որ կը սպասուի, եւ որով ժամանակաւոր սրտի դողունակութիւն մը ու հոգեկան անո՛ւշ միտքարութիւն մը կը կրկնուի... Իմ նամակներս...

Գիտես որ ցաւը ապրողն է որ շատ անգամ ցաւին զարման կը հնարէ, ու տառապողն ալ յաճախ իր միտքարութիւնը նոյն վշտով առաւելողին ներկայութեան, խօսքին ու գրածներին մէջ է որ կը գտնայ: Ժամանակ մը մէկտեղ տառապանքն, սիրելիս, ու այդ տառապանքի նստմանքն մէջ մասամբ երջանիկ է: Ինչ միտքով, իսկ այժմ որ զատուած ենք իրարմէ, կրկին կուզենք միմեան կրկին կը աննշանք իրարու կտոջի, մեր այրած սրտերը իրար կցել, մէկ տեղ բարակելու, մէկտեղ զարնելու: Ու այդ աննշանքին հասնելու՝ միակ գրկին ու թուղթը ունինք, ինչո՛ւ գոնէ առ ալ խնայենք իրարու...

Իսկ, սիրելիս, խորհեցա՞նք մի անգամ թէ մենք ալ այս աննշանք միտքարութեան մէջ կտուրու ու աննշանքն ենք դարձած: Խորհեցա՞նք անգամ մը աննշանք որ նոյնպէս մեր վիճակին բաղդակից են: Արդեօք անգամ մը ինչեղի՞ր այն ստուար տարողութեամբ սիրուած քու եղբայրութեանդ ու բաղդակիցներուդ բեկորները մոտիկ ու փոթորկալից հորիզոնին տակ, ամբողջ անաւոր հեղեղին հետ պիտի ընդունուի պիտի անյայտ ըլլան, ո՞վ զիսէ գուցէ չուտով... Անոնց կորուստը պիտի չի ծակոտէ՞ր սիրտդ անգամ մը եւս, ժամանակին խորհած չըլլալուդ բազուկը կտակաւորու ու կեցնելու զանոնք իրենց կորստի ճամբուն վրայ, ու հնար մը գտնալու զանոնք ե՛տ, զէպի իրենց մայրենի ծննդը զարմնելու, ուր միայն պահած կայ անոնց ու նոյնպէս մեզի համար իսկական ապրելու արժանի կեանքը: Օ՛ր, եթէ քու ցաւը ու տառապանքդ քեզ մոռցնել տուած են պահ մը քեզ նման պանդուխտ, տա-

ապրող ու թափառական եղբայրներդ, այսուհետեւ, հոգիս, մի մտնար աննշանք ալ, ու ամէն անգամ երբ կարօտ միտքարութեան կը ձգտուի այրած սիրտդ կեցողով մը գովացնելու, աննշանք մի ըլլար, ու միեւնոյն ժամանակ աչքիդ առջեւ ունեցիր այն բաղդէն հալածեալներն ալ, որոնք քու եղբայրներդ ու արիւնակիցներդ են, ու ջանաւ անոնց ալ մաս մը հանելու քու միտքարութեանդ, միայն փոքրիկ մաս մը...

Եւ որքա՞ն թիւով այսօր: Քեզի պէս օտարութեան անհիւններուն մէջ մոռցուած, լքուած կերպիւն, կը ցանկան որ, դոնէ կը բերնի:

Կուենի իրենց աշխարհէն խարրիկ մը բերէ:

Իսկ չի հասնիր անոնց այլեւս այդ բարեհալութեան կուենիք իր յաւիտենական ցաւատանը աղի-անուշ խարրիկներով: Այլ եւս կանց շառնար ան անոնց զլիւն վերեւ իր ակնասան ճանապարհորդի աղիխարչ պատմութիւնները պատմելու, ու կը թուի զէպի հոն, զէպի այն աննշանքները որոնց համար ցանկալի լուրեր է որ ունի: Եւ քու եղբայրակիցներդ յուսահատ սպասելէն, յոգնած պարապ անակնկալութեանը ունենալէն, սիրտ կտրատող հառաչանքով կը գոչեն իրենց սրտի խորէն յուսահատ՝

«Դանի որ ա՛յս կանեմ կը քակուի հոգիս...»

Սիրելիս աճապարենք քանի զեռ կանուխ է, վերաշինել զանոնք իրենց խոցոտուած սիրտերը քանի զեռ չէ քայքայուած ու վիշտակ եղած ամբողջովին: Խարրիկ մը, յուսատու, կենսատու խարրիկ մը հասցնենք որ անգամ մը եւս քաջութիւնը ունենան անոնք սրտերին յոյսի կածով վառած՝ զարձնելու ան զէպի հետեւն, զէպի հայրենի վատակ օճախը, նոյն ժամանակ հոն թառելու, հոն սրանալու աննշանքը ունենալով:

Միշտ ջանացած եմ քեզ փայլուն յոյ-

սերով միտքարել, ազնիւ վսեմ յոյսերով: ու արդեօք թույլ պիտի չի տա՞ս ինձ որ նոյն յոյսի կենսատու կաթիլներէն քու եղբայր-բաղդակիցներուդ սրտերուն մէջ ալ ջանամ ծորեցնել եւ մասնակից ընել տալ անոնց ալ ա՛յն երջանկութեան ու միտքարութեանը, որը դուն վայելելի յաճախ սրտի գոհունակութեամբ կը պատմես: Գիտցիր որ քու վիճակակիցներդ շա՛տ են շա՛տ, ու միթէ աննշանք ալ նոյնը չեն տեղար... Եւ անա ստոր համար է որ փափաքիդ հրապարակաւ գոհացում տալ կը ջանամ, յուսալով գոհացում տուած ըլլալ շատերուն ալ միեւնոյն տենջանքին:

Լուր կուզես ինձմէ, սիրելիս, հայրենիքէն նոր լուր կուզես որ հազորդեմ քեզի: Բայց այս անգամ միտքարութեան սիրտ կտրատող, անվերջանալի հարստահարութեանց լուր չէ որ կը պահանջու ինձմէ, որը սրդէն զիսեւս դուն, ու հերթէ է, կրեսս որքան աղիխարչ ու տառապագին լուրերուն հետ մենք ալ տառապեցանք: հերթ է, կաղերսես, որքան որ աչքերնիս ցաւակցողի դառնութեամբ միայն ու միայն ցաւին ու արիւնին մէջ միտքեցնեմ, ու միայն «աւա՛ղ» ով մը մեկուսացանք բաւականանալով զիրտդ ու լսողի լոկ անօգուտ աննշանքը ունենալ: Հերթ է կը բողբոջես, որքան որ հայրենիքի դերանակն ցաւին առջեւ միայն արտաւերջ ունկնդիրներ եղած ենք առանց այդ ցաւը հիմնապէս խորտակելու փափաքը զգալու չափ քաջութիւնը ունենալու: Ձէ թէ կուզես որ կենսատու ցաւին հանդէպ կոյր ու խուլ մնանք, ո՛չ, այլ կը պահանջես որ զանազանները զիստանք ցաւը երկունքին: որ ծնունդ պիտի տայ վաղուան զուարթ ու փայլուն արշալոյսին: Եւ այսօրուան մեր հայրենիքի ցաւն ալ երկունքի վսեմ ցաւն է, ինչու ցաւակցողի, սգաւորի դերէն աւելի ցաւին դարման գտնալու վրայ չենք

խորհիր, որ կարող ըլլանք ապրեցնելու զայն մինչեւ փոթորիկին վերջաւորութիւնը, մինչեւ ծնունդ ազատութեան: Ձի, կրեսս, երկունքի ցաւէն՝ յօր մահը նորածինի մահն ալ ըսել չէ՞ միթէ: Հայրենիքը-ազգը-պիտի ծնի մեր ցանկացած ազատութիւնը, ուստի նախ կեանքը Հայրենիքին, ազգին, ու ապա ազատութիւնը...

Նոր լուր, յուսատու նոր լուր: Այո, սիրելիս, գարնան գալուստին հետ յոյսի նորարդող ծիրերը սկսան բացուիլ, ու զարմանալի չէ որ դու ալ տեսնալ վայելիլ փափաքիս անոնց: Հայրենիքիս պարտաւոր ծառերը ծաղկել սկսած են, ամառը մօտ է, ու հոգիս, զիտցիր թէ մենք ալ ցաւին ու տառապանքին ընկճու մէջ վաստակելու մաս պիտի ունենանք այդ ազատութեան քաղցրիկ պտուղէն: Իսկ ձուր անգամ մը աչքդ դէպի շարքի ուսած, արիւնլուայ հայրենիքը. աւելի ու արիւնլուայ անմիջապէս վերջը հոն լքուած, յուսահատութիւնն ու մահը կը տիրապետէր, իսկ այժմ այդ արիւնին մէջ ծիր սկսած են դուրս ցցուիլ, մուշկ տառապանքը լեզու է առած այժմ, ու հոն այդ եղբմական զօրութեան մէջ կեանքը սկսած է ետալ ու բորբոքել, ու այդ կեանքը ապրել է որ կը պահանջէ, ապրել միայն արժանաւոր կեանքը... Ժողովուրդն է զարթած իր խորքունէն, ժողովուրդն է սկսած բողբոքել:

Ու ժողովուրդին բողբոքին առջեւ ապտառմանը կը ժայթքին, բռնութիւնը կը խորտակուի, ու ան ուշ թէ կանուխ պէտք է ու պիտի հասնի իր ազնիւ իտէպիւն: Ժողովուրդին այս օրուան նպատակին հասնելու ջանքերը, վաղուան ժամանակին հետ աւանդ իրականաւրն է որ պիտի տեսնուի: Սիրելիս, հայրենիքին իսկական ցաւը ապրող մեր հետաւոր եղբայրները առաջին իրական քայլը առած են մեր բոլորին ցանկութեան նպատակակէտը:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԽԱՅԻ ԶՐԱՏԱՐԱԿՈՒՄԷՆ ԱՌԱՅ

(Շար. նախորդ թիւէն)

Հայ լրագրութիւնը, ինչպէս ամէն լրագրութիւն առհասարակ, պէտք է յատուկ ուղղութիւն մը ունենայ, ուղղութիւն ունեցող կը նշանակէ լրագրին ամէն մէկ համարներուն մէջ ընթացողին ներշնչել հասարակական, կրթական, քաղաքական, անձնատկան բոլոր խնդիրներու մասին այն կարգ մը սկզբունքները զորս իմքազորը ընդգրկած է իր կատարելագործութեան եւ մարդկային երջանկութեան հասնելու ամենալաւագոյն միջոցը եւ որոնք իր գաւառները կը կազմեն: Ուղղութեան համայնացոյց պատկերը, զոր խմբագիրը պարտաւոր է, հասարակութեան հետ յարաբերութեան մասնելուն պէս իսկ հրապարակաւ յայտարարել իր ընդ երցողներուն, կը կազմէ լրագրին ծրագիրը:

Ինչու՞նուած ծրագիր մը իրականացնելու համար լրագրութիւնը պէտք է ընդգրկէ նախ անորք քունադատութեան սկզբունքը: Քննադատութիւնը յառաջ կը բերէ վիճաբանութիւններ, որոնցմէ խրատելու պէտք չիկայ, ցուրտփ վիճաբանութիւնները ազնիւ հոգի վրայ կը կա-

տարուին եւ վիճողները զերբ իբր երկու թշնամիներ չեն նկատեր, այլ երկու ընկերներ՝ որոնք միեւնոյն ասպարէզին վրայ իբրարու տարբեր ուղղութեամբ կը գործեն: Լեռանց վիճաբանութեան հասարակութիւն մը չի կրնար ինքնակրթուիլ, որովհետեւ կրթութիւնը մշտնջենաւոր վիճաբանութիւն է սիրող քաջատկութեան դէմ: Երբ մարդ ունի է նոր քաղաքիս մը կը յայտնէ, պարտաւոր է կոտիլ նախապաշարունակութեան դէմ: Երբ մարդ ուսում կը սորվի, պարտաւոր է խօսիլ անհասկցողութեան դէմ:

Անկեղծ քննադատութեան ըլլալու այս վիճաբանութիւնները կրկնակի կերպով օգուտ կը բերեն հասարակութեան: Նախ այս կրկնելը քունքը զարգացման, յառաջվումութեան կը մղեն. երկրորդ՝ կուտող ու մտածող հասարակութիւնները կը բաժնեն որոշ խումբերու, որոշ բանակներու, որոշ կուսակցութեանց, որոնք կը գործեն տարբեր ուղղութիւններով: միեւնոյն նպատակին համար:

Այս պայմաններու մէջ հրատարակուող լրագիրը միայն կրնայ հասարակութեան մէջ ներգործող դեր կատարել:

Իրաւ է որ եւրոպական հասարակութեան մէջ կան կրուտրական դեր կատարողներ ալ, բայց այդ դերի լրագիրները օգտակար կրնան ըլլալ

միմիայն խիստ զարգացած հասարակութիւններու համար, ուր ամէն անհատ արդէն ամբողջ ընդգրկած է սեփական ուղղութիւն մը, կը պատկանի յայտնի բանակի մը եւ քիտէ իր ընտրութիւնն ընել:

Կրուտրական լրագիրը միշտ աւելի շատ առարածուիլ ձգտելով, իր հիմնական սկզբունքն ըլլած է գոհացում տալ ամէն ուղղութեան մարդոց, ուստի իր էջերուն մէջ կը տպէ ամէն ուղղութեան յօդուածներ:

Այս տեսակ լրագիրներու թիւը ամենէն աւելի Անկլո-Սաքսոն երկիրներուն մէջ տարածուած է, ուր հասարակութիւնը խիստ զարգացած է:

Պէտք է արդէն մարդը զարգացած լինի՝ կը քրէ կը ծրարեն անոնց մասին խօսելով, պէտք է կուսակցութիւնները որոշված լինեն, պէտք է հաստատ, անխախտ համոզմունքներ ունենան թէ՛ մասնաւոր մարդիկը և թէ՛ կուսակցութիւնները, որ լրագրի մէջ ամեն տեսակ ուղղութեան պատկերով, նոքա չի շփոթվին, չի թափափուին, այլ զարձակ կարողանան դուրս բերել իրանց համար մի որոշ ուղղութիւն, իրանք կարողանան իրանց համար մշակել սեպակալան, անհասկանալի համոզմունքներ և հայեացքներ:

Իսկ այն հասարակութիւնները մէջ, որոնք այսպիսի զարգացում չունին և խիստ թոյլ են, կրուտրական լրագ-

րիւնները ոչ միայն օգուտ չեն ունենար, այլև վնաս կը պատճառեն: Հոն ուր մարդիկ իրենց յատուկ ուղղութիւն չունին, ուր նոր կը սկսին տարբեր մտածումներ և ըմբռնումներ երեւան դալ, հոն հարկաւոր են խիստ ու որոշ ուղղութեամբ ներգործող լրագրի լրանք, որոնք ազդեն ընթացողին վրայ և կուսակցութիւն մը ստեղծեն:

Անցնելով ընդհանուրէն մասնաւորապէս հայ ազգին, Արծրունի վճռականօրէն կը յայտարարէ թէ՛ ներգործող կամ կրուտրական լրագիր ունենալու հարցը մեզի համար երկու տեսակ պատասխան չի կրնար ունենալ: միմիայն ներգործող լրագիր հարկաւոր է հայ ազգին:

Սեզ համար զեռես վաղ է, վնասակար և անգործադրելի՝ կրուտրական քաղաքական թերթը: Իսկ թէ մեզնում, պատահմամբ, խմբագիրներ կրթութեան պակասութեան կամ լրագրութեան նշանակութեան վերա կատարել տղիտութեան պատճառով, կազմվի կրուտրական մի թերթ, նա չի լինի ընդհանրական, ընդարձակ, ազնիւ, բարի նշանակութեամբ կրուտրական, այլ շատ շատ կը լինի միայն անգոյն, իսկ զէպքերի մեծ մասամբ յիմար:

(Շարունակելի)

Պէտք է յոյս ներշնչենք անոնց, պէտք է դարձանք գտնանք՝ որ անոնց քայլերը կանգ չառնեն, անոնց սրունքները չի թուլանան, ու միշտ վրէժի կրակը իրենց սրտին մէջ յառաջ երթան միշտ անվատ, յառաջ դէպի ազատութեան կատարները: Թէպէտ տարիներու երկար շարանով մը բաժնուած հեռացած անոնցմէ, բայց, հոգիս, ջանանք հոն թառել գոնէ սըրտով, որ մերը անոնց սրտին հետ կըցած: Թողունք որ մէկտեղ ցանկան ուտենջան, մէկտեղ բաբախեն, ու այդ պատուութեան արտայայտութիւնը ալ թող գիտնան թէ միտակ չեն վտանգի դաշտին վրայ, թէ մոռցուած չեն իրենց տարրազիր արեւնակիցներէն ճակատագրական ահաւոր րոպէին, ու իրենց դժուարին ծանր բայց վատահաջ պայլին մէջ միմիջարեւութիւնը ունենան ուրախ ու՛ երջանիկ այն համոզմամբ թէ սրտով գոնէ իրենց հետ ենք...

Իրտեմ, շատ երկարացի այս անգամ. ինչ որ կը փափագէի գրել քեզի, սիրելիս, յաջորդին կը յետաձգեմ ըստիպումով: Կերպարան եզրի այս անգամ, շուտ գրէ ու ապա սպասէ յաջորդ նամակին:

Քոյդ Վարդան  
Լոսնոն 20 Ապրիլ 804

**ԹԱՏԵՐԱԿԱՆ**

Հինգ շաբթի գիշեր Պ. Պապեանի ղեկավարութեամբ «Նատէժտա» խումբը, ինչպէս արդէն ծանուցուած էր, ի նպատակ վառնայի պարային երկսեռ դպրոցներու ներկայացուց Շէքսպիրի Օթելլո ողբերգութիւնը: Խառնուր լի էր երկսեռ բազմութեամբ. կըսեն թէ մօտ հազար լէվի տոմսակ ծախուած է, ուրեմն ներթական տեսակէտէ ներկայացումը շատ յաջող կարելի է ընդունիլ:

Բայց խաղի անսկէտով ներկայացումը յաջող չէր. մէկ քանի կարծուր վայրկեաններու մէջ միայն տիկին Յակոբեան կըցաւ Տէղտէմոնան, այդ անմեղ զոհը պատկերացնել:

Օթելլո (Պապեան) և Նախո (Երամեան) բոլորովին անյաջող էին, չը նայած որ Պապեան ամեն ճիգ կը թափէր ազդող Օթելլո մը ըլլալ: Երամեան սպասուածէն աւելի անյաջող խաղաց:

Մեր բարեկամական խորհուրդը Պապեանի, որ տա այժմ յանձըն չառնէ այդպիսի ծանր ներկայացումներ տալու: Ի պիշական խաղերէն յետոյ իսկոյն Օթելլոի ցատկել, այն ալ ստանկ թոյլ ուժերով, բացարձակ ճամբան կորսնցնել, մէկ ծայրահեղութենէ միւս ծայրահեղութեան մէջ իյնալ կը նշանակէ:

Ամեն դժուարին արեւստ ջանքերով, ըմբռնումով և աստիճանաբար կը յաղթահարուի: Պապեան և իր խումբը մոռնալու չեն այս ճշմարտութիւնը և ենթարկուելու չեն այն պարզամիտներու գովասանքին, զոր կը տեղան ա-

մեն մոռնալու և բառաչիւնի հանդէպ, թէկուզ ատոնք շատ անվայել և անտեղի ըլլան...

Սակայն Պապեան մեծ ծառայութիւն կընէ Վառնայի հայ հասարակութեան, երբ կաշխատի ի պիշականութիւնը վերցնել թատրոնի բեմէն: Այդ ալ պզտիկ ծառայութիւն մը չէ. կարելի է արեւտագէտ չըլլալ, բայց գեղարւեստը և վեհը սիրցնելու վարժեցնել տալ:

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

**Թ Ո Ւ Ր Ք Ի Ս**

Շուտով Բարիչի գեոպան Միւնիւնի փաշան, որ այժմ Պօլիս կը գտնուի, Սօֆիա պիտի գայ Սուլթանի գոհունակութիւնը վերջին համաձայնութեան առթիւ իշխանին յայտնելու համար:

— Անցեալ օրեր Իզմիրի մէջ թիւրք հիւպատոսի քարտուղարը ընդհարում ունեցեր է թուրքերու հետ և փոխադարձաբար ստրճանակ պարպուեր է: Այդ պատճառով յոյն կառավարութիւնը ընդգրկել է Բարձր. Դրան և գոհացում կը պահանջէ: Թուրք կառավարութիւնը կը պնդէ որ առաջին անգամ ստրճանակ պարպուեր է յոյն քարտուղարը: Կը խօսուի թէ, եթէ թուրքիան գոհացում չի տայ, յոյն կառավարութիւնը իր Պոլսոյ գեսպանը պիտի կանչէ, իր հպատակներուն պաշտպանութիւնը պիտի յանձնէ ֆրանսական ղեսպանութեան և զօրքը պիտի պատերազմական վիճակի մէջ դնէ:

— Բարիչի Յունաց գեսպանը յայտարարած է որ այդ խնդիրը լուրջ կերպարանք չը պիտի ընդունի:

— Անցեալ օրեր թուրք սահմանազլիսի վրայ թուրք պաշտօնեաները քննութեան ենթարկեր էին պուլկար գործակատարի քարտուղարին իրեղէնները. պուլկար կառավարութիւնը այդ ստորին խտրութիւնը չէր թուրք կառավարութիւնը այդ առթիւ ներդրութիւն խնդրել է, և խոստացեր է Մուստաֆա փաշայի մարսապետը պաշտօնանկ ընել:

— Ռուս և Աւստրիական հիւպատոսները, իրենց կառավարութեանց հրահանքներուն համաձայն սկսած են հաշուել Մակեդոնիոյ քրիստոնեայ բնակիչներուն թիւը: Այդ մարդահամարը կըսուի թէ կապ ունի բարենորոգման խնդրի հետ:

— Կ. Պոլսէն «Ինֆորմացիոն»-ին կը գրեն.

«Սասնոյ հայդուկներու շէֆը Անդրանիկ Չէքի փաշայի յարձակողական դիրք բռնած է. Ան

յարձակում գործած է Պիթիլիի մօտ գտնուող չորս թուրքական գիւղերու վրայ: Թուրք պաշտօնական շրջանակներէն այս առթիւ լուր տարածուեցաւ, թէ հայ հայդուկները կոտորած են յարձակման ենթակուող գիւղերուն բնակիչները և կիները բռնաբարած: Այս լուրերը իրաւ չեն, ընդհակառակը Անդրանիկ ունեցած է ճշմարիտ ճէնթիւմներ մը վարմունքը: Ան քիւրտերու կիները և երախները նախ դրացի հայ գիւղերուն մէջ պատսպարելէ յետոյ է, որ գիւղերը տերելու հրաման տուած է: Կուրին մէջ սպաննուած են 40 քիւրտեր: Ասով սկսած է Սասնոյցիներու կռիւր մահէտականներուն դէմ:

Չնայելով որ հայերուն մեծագոյն մասը անպէն է, բայց անոնք դարձեալ Չէքի փաշայի յարձակման պիտի դիմագրեն: Չորրորդ դարաւանակի հրամանատարը դիւրաւ պիտի կարողանայ Մշոյ դաշտի մոզովուրդը ջարդել, ինչ որ արդէն մասամբ ըրած է մեծ պետութիւններու գիտակցութեամբ: Բայց Սասնոյ լեռներուն առջև Սուլթանի զօրքը պիտի հանդ պուժող դիմագրութեան, Յառաջխաղացութեան մը համար տենդոտ եռանդով կը տեսնեն պատրաստութիւններ: Ամէն օր հոն կը հասնին զօրք և համիտիէներ, որոնք Մուշի և ամբողջ Պիթիլիսի վիլայէթի հայ ազգաբնակչութիւնը ձգած են ահ ու սարսափի մէջ: Միւս կողմէ Մուշի հայ եպիսկոպոսը ամէն ջանք կը թափէ, որ Անդրանիկը և իր մարդիկը հպատակութիւն յայտնեն, բայց հայ հայդուկներու շէֆը իր որոշման մէջ կը մնայ անդրդուելի և շուրջեր իրեքք ենթարկուելու: (\*)

(\*) ... Ականջը խօսի ալֆարիսա և միութեանականճի խեղճերուն: Հիմա անոնք պիտի ըսեն, թէ յինֆորմացիոն»-ի խմբագիրներն ալ Դաշնակցականներ են, որ Անդրանիկին գովքը կը կարգանու եթէ այդ մարդիկները իրենց բաժին իրենք հաւատան և ուրիշներուն ալ կարենան հաւատացնել, այն ատեն պէտք է ընդունիլ, որ նաշնակցութիւնը իր ազդեցութիւնը տարածած է նաև Վիեննայի վրայ... Այս պզտիկ գործ չէ:

**ՌՈՒՍ — ՃԱՐՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԿԱՆ**

Ինթերպուրի մէջ լուր տարածուի է որ մէնթալ Բուրբաթքի խոհարար փորձած է զայն թունաւորել:

— Վիեննայի թերթերէն Ռին կը հաղորդէ որ ճարտեցիք կը պատրաստուին Վլատիվոսթրի առական նաւատորմի ճամբան կտրել:

— Ամիրալ Սպիտով անցեալ օր մեկնած է դէպի Բորթոմի թուրք:

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ եթէ Չինաստան պատերազմին մասնակցիլ ուղենայ, եւրոպական պետութիւնները Ռուսիոյ պիտի օգնեն:

— Քօրէսի կայսրը, իբրև հասատուն բարեկամութեան շնորհան, ճարտի կայսեր մեծահարուստ նուէրներ զրկած է:

— Անգլիական թագաւորին հայտնութեան համար եղած միջադէտութեան լուրը բոլորովին կը հարգուի: Յարին գրուած նամակ մէջ այդ մասին ոչինչ կայ:

— Ճարտեցիք յաջողեր են խորտակել Բորթոմի թուրքի և նիշ վանկի միջուկ եղած երկաթուղիին գիծը և այդ կողմերը զօրք հաներ են ցամաք:

— Ռուսական «կրճատան» թերթը յողուածով մը կը յայտարարէ որ ռուսերը, առանց ուկրայնութեան մը միջամտութեան հաշտութիւն պիտի կայացնեն ճարտիին հետ, առաջին յաջողութեան անմիջապէս յետոյ:

— Թօքիոյ մէջ գտնուած օտար պետութեանց զինուորական կցորդներուն ճարտ կառավարութիւնը յայտարարած է որ կրնան պատերազմի դաշտը երթալ: Ուրեմն գլխաւոր փակատամարտը հեռու չէ:

— Պէր. Թանգլ. «Թերթը» կը հաղորդէ որ ճարտեցիք Ռուսներու երեւակայածէն աւելի զօրք պիտի կարենան զրկել կուրդաշտը:

**ՅՐԱՆԱՍ**

Ժօրէս սկսած է առանձին թերթ մը հրատարակել ու՛ Հիւսիսային անունով, որուն պիտի աշխատին նշանաւոր ֆրանսացի և օտար ընկերակարականներ:

— Նախագահ Լուպէ գեղեցիկ և թանկագին նւէրներ ընդունել է Իտալիոյ թագաւորէն:

— Ռուս մամուլը գոհունակութեամբ կը խօսի Լուպէի Իտալիոյ մէջ լաւ ընդունելութիւն գտնելուն համար:

**ԱՄԵՐԻԿԱ**

Միացեալ Նահանգներուն ծերակոյտը վաւերացուցեր է այն առաջարկը, որով Ռուսիոյ պիտի դիմուի դժուարութիւններ չըլլաբուցանէ ամերիկեան անցագիր ունեցող հրէաներու դէմ:

**ՕՏԿՈՎՈՐՆԻԿ**

Мурадъ-Ераносянъ